Կազմված է 01.10.2018թ

Տպագրված է 2 օրինակ,

Օրինակ N1

Հաստատված է
«Ուղղակի Ժողովրդավարություն»
ժողովրդավարական ինստիտուտների
ամրապնդման
հասարակական կազմակերպության
հիմնադիր ժողովի կողմից

«01» հոկտեմբեր 2018թ.

Նախագահ
Գևորգ Քոթանջյան

Գրանցված է
ՀՀ Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

«27» 10 2018թ.

Գրանցման համարը 211.171.1043228

ՀՎՀՀ 06955981

Պետական ռեգիստրի գործակալություն

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# «ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2018թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՈՒՂՂԱԿ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ ֆիզիկական անձանց)և(կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:

1.3 Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ, չի հարում որևէ, քաղաքական հոսանքի:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպություն, հայերեն կրճատ անվանումն է ՝ « ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ » ԺԻԱ ՀԿ, անգլերեն լրիվ անվանումն է՝"DIRECT DEMOCRACY" non-governmental organization for consolidation democratic institutions, անգլերեն կրճատ անվանումն է՝ "DIRECT DEMOCRACY" CSI NGO

1.6 Կազմակերպության գտնվելու հասցեն է՝ 2014, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նարեկացի 14/2 բ. 8

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են օրենքով սահմանված կարգով՝

- Պաշտպանել ՀՀ քաղաքացիների և ՀՀ տարածքում գտնվող այլ երկրների քաղաքացիների սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքները և արտոնությունները,
- Նպաստել ՀՀ տարածքում ժողովրդավարական գործընթացներին հասարակության ներգրավածությանը,
- Խթանել կրթության մատչելիությունն ու հասանելիությունը երիտասարդների համար,
- Ընտրական գործընթացներին դիտորդական խմբերի պատրաստում, և ընտրական գործընթացին ներգրավում,
- Նպաստել ՀՀ համայնքներում մասնակցային քաղաքականության ամրապնդմանը և իրականացմանը,
- Ապահովել հաշվետվողական, բաց և թափանցիկ կառավարման ստեղծմանը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,

- Աջակցել քաղաքացիական ակտիվությանը ,
- Զբաղվել հասարակությանը մասնակցային կառավարմանը ներգրավելով,
- Խթանել քաղաքացիների մասնակցությունը կառավարման գործընթացին, ընտրական գործընթացներին, մշակույթային կյանքին, ազատ ժամանցին և բնության պահպանությանը,
- Հզորացնել «Ուղղակի ժողովրդավարություն» ԺԻԱ ՀԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունները և կառավարման գիտելիքներն ու հմտությունները:

2.2 Կազմակերպությունը իր նպատակների և խնդիրների իրականացման համար օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործունեությունը՝

- Կրթական, սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում
- Կրթական տարբեր միջոցառումների և վերապատրաստումների կազմակերպում
- Իրազեկման բարձրացման տարբեր միջոցառումներ /սոցիալական գովազդ, քարոզարշավ, ԶԼՄ համագործակցություն, աշխատանք ընտանիքների, կրթական, տեղական ինքնակառավարման մարմինների,կենտրոնական ընտրական հանձնաժողովի և այլ հաստատությունների հետ, հանդիպումներ, կլոր-սեղաններ, տպագրություն և օրենքով չարգելված այլ միջոցառումներ/
- Սոցիալական ձեռնարկությունների հիմնում
- Փոխօգնության խմբերի ստեղծում և հանդիպումների կազմակերպում
- Մշակութային տարբեր խմբակների /երգ, պար, թատրոն, ինտելեկտուալ խաղեր և այլն/
- Էքսկուրսիաների, բացօթյա միջոցառումների, ցուցահանդեսների կազմակերպում
- Օրենքով չարգելված այլ միջոցառումներ
- Համագործակցում ՀՀ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

2.3 Կազմակերպությունը ՀՀ պետական մարմիններին կարող է ներկայացվել իր կանոնադրական դրույթներից բխող առաջարկություններ:

2.4 Կազմակերպությունը կարող է ունենալ լրատվական միջոցներ և տնտեսական ընկերություններ, ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ, ինֆորմացիոն կենտրոն, պարբերական հրատարակություն, ուսումնական կենտրոն և հատուկ հանձնաժողովներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5 Կազմակերպությունը կարող է իրականացնել այլ գործունեություն, որը չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1 Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ Կազմակերպության պետական գրանցման պահից:

3.2 Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

3.3 Կազմակերպությունը ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, նպատակները և գործունեության ձևերը:

3.4 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներ իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի.

1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք,

3) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

4) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

5) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

6) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

7) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

8) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

9) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ,

10) օտարել կամ վարձակալության և օգտագործման հանձնել կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ գույք,

11) ինքնուրույն կազմավորվել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում արտարժույթով,

12) իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, իր անդամներին գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

13) կազմակերպել մրցաշարեր, ուսուցողական սեմինարներ, այդ թվում նաև միջազգային,

14) հիմնադրել լրատվության միջոցներ,

15)ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ

16) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

17) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով,

18) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ

19) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

4.1 վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.

4.2 «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.

4.3 պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Գործակալությանը.

4.4«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

4.5 ցանկացած ֆիզիկական անձի պահանջով ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան յոթ օրացույցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը:

4.6 Օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:

4.7 Իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը, ոչ պակաս քան երկու տարին մեկ անգամ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը:

4.8 Առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:

4.9 Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.

4.10 Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.

4.11 իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.

4.12 ցանկացած ֆիզիկական անձի պահանջով ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան յոթ օրացույցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը:

4.13 Օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:

4.14 Իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը, ոչ պակաս քան երկու տարին մեկ անգամ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը:

4.15 Առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:

4.16 կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով օրենքով սահմանված կարգով:

5.2 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

5.3Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, ինչպես որ վերջիններս պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Եթե Կազմակերպությունն իր անօրինական գործունեությամբ վնաս է հասցրել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պարտավոր է այն հատուցել իր գույքի հաշվին օրենքով սահմանված կարգով:

5.4 Պետությունը ապահովում է Կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության գործունեությանը միջամտելն արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5.5 Կազմակերպությանը հասցված վնասը, որը հետևանք է պետական կամ այլ մարմինների, կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության իրավունքների ոչ պատշաճ կատարման, ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Անձի անդամակցությունը Կազմակերպությանը չի կարող հանդիսանալ նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք, պետական մարմիններում պաշտոն զբաղեցնելու պայման կամ արգելք: Արգելվում է Կազմակերպության անդամությունը նշելու պահանջը:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Կազմակերպության անդամ կարող է դառնալ 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ, ինչպես նաև իրավաբանական անձ ով ընդունում է սույն կանոնադրությունը և իր գործունեությամբ նպաստում է Կազմակերպության կանոնադրական նպատակների ու խնդիրների իրագործմանը և մուծում է անդամավճար, որի չափն ու վճարման կարգը սահմանվում է Կազմակերպության խորհրդի կողմից::

6.2 16-ից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Անչափահաս անձը չի կարող ընտրվել կազմակերպության ղեկավար մարմիններում:

Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին:

6.2 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է կազմակերպության Խորհուրդը: Կազմակերպության անդամության մեջ ընդունելու մասին դիմումի մերժումը գանգատարկման ենթական չէ:

6.3 Կազմակերպության խորհուրդը Կազմակերպության անդամների նկատմամբ կարող է կիրառել ինչպես խրախուսանքի միջոցներ, այնպես էլ տույժի միջոցներ՝ Կազմակերպության կանոնադրական դրույթների խախտումների դեպքում:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

7.27.2 ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում.

7.3 ներկա լինելու Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին.

7.4 ներկա գտնվել Կազմակերպության ժողովին, եթե վերջինս անցկացվում է Կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել,

7.5 Կազմակերպության խորհրդի կողմից սահմանված դեպքերում անվճար օգտվելու նրա ծառայություններից.

7.6 ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.

7.7 Վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները.

7.8 Կազմակերպության մարմնի (այդ թվում բարձրագույն մարմնի) որոշումը, որն ընդունվել է օրենքի, Կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարվել է Կազմակերպության կամ կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատակնա կարգով անվավեր ճանաչվել կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

7.9 Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.

7.10 իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

7.11 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.

3) վճարել անդամավճար:

4) հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման համար,

5) աջակցել կազմակերպության անդամության համադրմանը,

7.12 Կազմակերպության կանոնադրության, կարգապահական կանոնները խախտող կազմակերպության անդամի նկատմամբ կազմակերպության Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ ընդհուպ կազմակերպության անդամությունից հեռացումը:

7.13 Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին կազմակերպության Խորհրդի որոշումը կարող է գանգատարկվել Կազմակերպության ժողովին:

## 8.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

8.2 Կազմակերպության ժողովը հրավիրվում է յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը: Եթե կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

8.3 Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների առնվազն 1/3-ի կամ կազմակերպության նախագահի պատճառաբանված պահանջով Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրացույցային օրվա ընթացքում:

8.4 Կազմակերպության ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.

2) ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.

3) որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.

4) հաստատելու Կազմակերպության կառուցվածքը.

5) ընտրելու Կազմակերպության գործադիր մարմին.

6)Կազմակերպության Խորհրդի, նախագահի ընտրությունը, կազմի փոփոխումը կամ լիազորությունների դադարեցումը,

7) որոշումներ ընդունելու Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին.

8) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները.

9) ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի.

10) հաստատելու Կազմակերպության ռազմավարությունը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն.

11) երկու տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.

12) դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.

13) ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին.

14) ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.

15) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.5 Կազմակերպության ժողովը կարող է հարցեր քննարկել ու որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամները: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

8.6 Խորհուրդն ընտրվում է ժողովի կողմից երկու տարի ժամկետով և հրավիրվում է առնվազն ամիսը մեկ անգամ:

8.7 Խորհուրդը՝

ա/ Հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ ժողովին ներկայացվող հաշվետվությունը

բ/ առաջարկություններ է ներկայացնում ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերի վերաբերյալ,

գ/ ընդունվում է կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում է անդամությունից,

դ/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ

ե/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում

զ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը,

8.8 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

8.9 Կազմակերպության նախագահին ընտրվում է ժողովի կողմից երկու տարի ժամկետով:

8.10 Կազմակերպության նախագահը.

1) ապահովում է Ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը.

2) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) տալիս է լիազորագրեր.

4) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

5) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

6) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.

7) ղեկավարում է Խորհրդի աշխատանքները և վարում է նրա նիստերը,

8) ներկայացնում է կազմակերպությունն առանց լիազորագրի,

9) ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս է գրում կազմակերպության մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ գույքը,մեկ միլիոնը գերազանցելու դեպքում տնորինումը կատարվում է խորհրդի համաձայնությամբ:

10) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները.

11) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները.

12) հաստատում է ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք երկու տարին մեկ անգամ ներկայացվում է ժողովի հաստատման:

13) իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

## 9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է կազմակերպության սեփականությունը:

9.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

9.3 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ օրենքով սահմանված կարգով կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,

- Բանկային հիմնարկներից ստացված վարկերը,
- Դրամաշնորհները
- Բարեգործական նորդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները, դրամահավաքման միջոցառումներից ստացված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:
- Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները

9.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

9.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

9.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

9.7 Կազմակերպության ղեկավար մարմիններում ընտրված անձինք կազմակերպության կողմից կարող են վարձատրվել, եթե նրանց մշտական աշխատանքի վայրը հանդիսանում է Կազմակերպությունը: Նշված անձանց վարձատրության չափը սահմանում է ժողովը:

## 10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

10.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել ժողովի կամ դատարանի որոշմամբ: Ժողոցը կազմավորվում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

10.2 Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել ժողովի որոշմամբ, կամ օրենքով սահմանված դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: